քանչ, և դնելով գիւղից դուրս, Նարկիզաւատ ճանապարհի վրայ գնացել է գիւղը, որ քահանային բերէ ամփոփելու, երբ Նսայի քահանայի հետ գալիս են զէպի այն մոխիրը, տեսնում են ճառագայթաձեւ լոյս սփռուած այն տեղի վրայ. ուստի երկիւղածութեամբ մօտենալով ստուգում են լուսոյ փայլումն, և իմացնում են կոչնակահարութեամբ բոլոր ժողովրդոց։ Այսպէս քահանայն և ժողովուրդը սուրբ Սահակի վրայ իջած լոյսը յայտնապէս տեսնելով միւս օրն վիճակի Առաջնորդին են իմացընում [1]), և սկսնում են շինել այն մոխրի վրայ լուսոյ փայլած տեղումն եկեղեցի յանուն նոյն սուրբ Սահակայ՝ յամի Տեառն 1417։ Լոյսը տեսել են հեռուից և նահատակած տեղումն Փիր Սահակ գետի մօտ, որ տեղը այսօր իսկ ուխտատեղի է Պարսից։

"Այս մատուռն նորոգել է Շամախեցի պարոն Խաչատուր Ղազարեան յամին 1817, ինչպէս դրան ճակատի արձանագիրն ցոյց է տալի, որ է ըստ այսմ։

"Այս նահատակս յայլազգեաց է ծնեալ ընդ,
Յետոյ եկեալ ի հաւատս Լուսաւորչոյն,
Զեռնաղրեցաւ սուրբ վարդապետս Սահակ անուն,
Որոյ վասն հուրբ փոխեցաւ այրեալ իսկոյն,
Ի սէր նորա կատոյց եւ զայս փոքրիկ մատուր,
Շամախեցի Ղազարեան այրն Խաչատուր.
Հայցէ ի ձէնչ հանդիպողաց սրտիւ տխուր,
Մաղթել ի Տեառնէ վասն ինքեան կենդանի ջուր։

1817 մայիսի 1

Մատրանս մէջ ազակողմեան դասուն դրած մի հին գերեզ-

ուաւ, մականուամբ կոչուելէ "Զարամի Գէօկչայ„ այն է սրբի մոխիրը գողնալու պատճառաւ։

Պարսիկները անուանեալ են նրան Հարամի, այն է Աւազակապետ իբրեւ անարգանք նրան։

[2]) Գրիգոր եպիսկոպոս ըստ աւանդութեան։